ՄԻՀՐԱՆՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԸ ՈՒՏԻՔ-ԱՐՑԱԽՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՍՎԱՋՅԱՆ Հ. Ս.

Միհրանյան տոհմը Ուտիք-Արցախյան աշխարհում կամ Հայոց Արևելից կողմերում, հայտնվում է VI դ. վերջերին և կարճ ժամանակ անց՝ VII դ. սկզբներին դառնում Կուր և Արաքս գետերի միջև ընկած հայաշխարհի այն իշխանական տունը, որն ավելի քան երկու դար անընդմեջ՝ մինչև 821 թ., իրեն է վերապահում տարածաշրջանի իշխանաց իշխանի տիտղոսը կրելու իրավունքը:

590 թ. Սասանյան Իրանում դավադրաբար սպանվում է պարսից Որմիզդ Դ թագավորը (579-590 թթ.): Դավադրությունը կազմակերպել էին արքայի կնոջ եղբայրները՝ Բնդոն և Վստամը, իրենց քրոջ որդուն՝ Խոսրով Բ Փարվեզին, գահ բարձրացնելու մտադրությամբ: Սակայն նոր-նոր արյաց արքա հռչակված Խոսրով Բ-ն հարկադրված էր դեռ պաշտպանելու իր իրավունքները գահին աչք դրած ապստամբ զորավար Վահրամ Չուբինի ոտնձգություններից, որը, Մծբինի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնելով նրան, հաղթողի փառքով մտել էր Տիզբոն՝ իբրև արիների թագավոր: Պարտված գահակալը փախչում է Բյուզանդիա, որտեղից վերադառնում է Մորիկ կայսեր (582-602 թթ.) տրամադրած զորքով, Ատրպատականի մերձակայքում կռվի է բռնվում Վահրամ Չուբինի հետ, ջախջախում վերջինիս և վերահաստատվում է գահին: Գահ բարձրանալով՝ Խոսրով Փարվեզը (590-628 թթ.) երկրում երկպառակություններին վերջ տալու և հոր սպանության վրեժը լուծելու համար սկսում է հետապնդել քեռիներին ու նրանց ազգականներին՝ սպանելով շուրջ վաթսուն հոգու[1]: Օգտագործելով առիթը՝ պարսից արքունիքը դիմում է խորամանկության: Իրբ թագավորի վրեժխնդրությունից խուսափելու համար նրա ազգակից Միհրանը, որը սերում էր իրանական յոթ նշանավոր տներից մեկից, ըստ պատմիչ Մովսես Կաղանկատվացու, երեսուն հազար երդով հեռանում է երկրից՝ ցույց տալով, թե մտադիր է անցնել Խոսրովին թշնամի խազարների մոտ: Դրանից զավորը (579-590 թթ.): Դավադրությունը կազմակերպել էին արքայի կնոջ եղբայրները՝ Բնդոն և Վստամը, իրենց քրոջ որդուն՝ Խոսրով Բ Փարվեզին, գահ բարձրացնելու մտադրությամբ: Սակայն նոր-նոր արյաց արքա հռչակված Խոսրով Բ-ն հարկադրված էր դեռ պաշտպանելու իր իրավունքները գահին աչք դրած ապստամբ զորավար Վահրամ Չուբինի ոտնձգություններից, որը, Մծբինի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնելով նրան, հաղթողի փառքով մտել էր Տիզբոն՝ իբրև արիների թագավոր: Պարտված գահակալը փախչում է Բյուզանդիա, որտեղից վերադառնում է Մորիկ կայսեր (582-602 թթ.) տրամադրած զորքով, Ատրպատականի մերձակայքում կռվի է բռնվում Վահրամ Չուբինի հետ, ջախջախում վերջինիս և վերահաստատվում է գահին: Գահ բարձրանալով՝ Խոսրով Փարվեզը (590-628 թթ.) երկրում երկպառակություններին վերջ տալու և հոր սպանության վրեժը

---

[1] **Մովսես Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Ե., 1983, էջ 170-171, Պատմութիւն* **Սեբէոսի,** *աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 73-75, 94-95:* **Թովմա Արծրունի** *և* **Անանուն**, *Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 136:*

լուծելու համար սկսում է հետապնդել քեռիներին ու նրանց ազգականներին՝ սպանելով շուրջ վաթսուն հոգ[2]ու: Օգտագործելով առիթը՝ պարսից արքունիքը դիմում է խորամանկության: Իբ[3]ր

թագավորի վրեժխնդրությունից խուսափելու համար նրա ազգակից Միհրանը, որը սերում էր իրանական յոթ նշանավոր տներից մեկից, ըստ պատմիչ Մովսես Կաղանկատվացու, երեսուն հազար երդով հեռանում է երկրից՝ ցույց տալով, թե մտադիր է անցնել Խոսրովին թշնամի խազարների մոտ: Դրանից «անհանգստացած»՝ Խոսրովը նության պայմաններում հայանում են և սկսում հանդես գալ իբրև հայկականության ջատագովներ:

590 թ. գալով իշխանության՝ Միհրանյանները մինչև 821 թ. շարունակ «որդի ի հօրէ առնլով»[4] ժառանգաբար տիրում են Ուտիք-Արցախյան աշխարհին՝ որպես տեղի հայ ավատատիրական վարչաքաղաքական կազմավորման «Առաջին» կամ «Մեծ» իշխաններ: Նրանց վերջին ներկայացուցիչը Վարազ-Տրդատ Գ-ն էր, որը որդու՝ նորածին Ստեփանոսի հետ 821 թ. սպանվում է Դադոյի վանքի ձորում՝ Խորաձորում[5], իր ազգական Ներսեհ Փիլիպյանի կողմից: Սպանվածի կինը ողջ մնացած դստերը՝ Սպրամին, գիշերով փախցնում է Խաչեն, որտեղ էլ ամուսնացնելով տեղի Առանշահիկ իշխան Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհի հետ՝ կրկին միավորում է Առանշահիկ և Միհրանյան տոհմերը[6]. «Եւ պատուաստութեամբս այսուիկ առ ի զոյգ ունել զպետութիւն արևելեայց կողմանցս Աղուանից»[7]:

Հաստատվելով Հայոց Արևելից կողմերում՝ Միհրանյանները խոշոր դերակատարություն ունեցան Ուտիքի և Արցախի VI դ. վերջերի – IX դ. առաջին քառորդի պատմության մեջ: Նրանց հեռատես ու շրջահայաց քաղաքականության շնորհիվ հայկական այս երկու նահանգները ոչ միայն պահպանում են իրենց ներքին անկախությունը, այլև հասնում տնտեսական ու հոգևոր-մշակութային զարգացման մի նոր աստիճանի[8]: Ուստի նպատակահարմար համարեցինք նաև անուն առ անուն ներկայացնել Միհրանի սերունդներին, որոնք նշված ողջ ժամանակաշրջանի ընթացքում ապահովեցին երկրամասի ինքնուրույնությունն ու տարան վերելքի ուղիով, ըստ վերջիններիս մասին խոսող եզակի աղբյուրի՝ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի:

Եվ այսպես.

Միհրան (Միհր)
(590)
I
«Շինեաց յիւր անուն քաղաք մի՝ կոչելով զնա Միհրաւան»[9]:
I

---

[2] **Կաղանկատվացի**, *էջ172:*

[3] *Նույն տեղում, էջ 182, 343 (ընդգծ. Ս.Հ.): Այստեղ և այսուհետև «Աղվանք» եզրույթի տակ պետք է հասկանալ «Հայոց Արևելից կողմերը»:*

[4] *Նույն տեղում, էջ 326, 339:*

[5] *Լ.Ղ.Հ Ստեփանակերտի շրջանում:*

[6] *Մինչ այդ Միհրանյանները փեսայացրել էին Զարմիհր Առանշահիկին:*

[7] **Կաղանկատվացի**, *էջ 338:*

[8] *Ուտիք-Արցախյան աշխարհում Միհրանյանների հայտնվելու, հաստատվելու և երկրամասում նրանց ծավալած քաղաքական ու տնտեսական գործունեության մասին մանրամասն տե՛ս* **Սվազյան Հ.** *Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից - VIII դարը ներառյալ), Ե., 2006, էջ 225-259::*

[9] *Կաղանկատվացի, էջ 171:*

Արմայէլ
I
Վարդ Ա
I
Քաջ Վարդան
«Շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս»[10] և «հաւատացեալ ի Քրիստոս[11]:
I
Վարդ Բ
I

I Վարազման	I Վարազ Գրիգոր (Գագելի) (628-642) Կինը՝ Գորիդուխտ: Իր իշխանությունը տարածեց Կուր և Արաքս գետերի միջև ընկած ողջ տարածքի վրա և հռչակվեց Առաջին կամ Մեծ իշխան Աղուանից: 628 թ. Գարդման մտած Հերակլ կայսեր (610-641) հարկադրանքով ընդունեց քաղկեդոնականություն, բայց նրա հեռանալուց հետո վերամկրտվելով Աղվանից կաթողիկոս Վիրոյի (628-630) կողմից, վերադարձավ հայրերի հավատին[12]: I	I Շուշիկ տիկին

I **Վարազ Փերոժ** «Ղաքնար[13] ուներ պատիւ»[14]: Իշխանության կենտրոնը Ուտիքի Գիս ավանն էր: 642 թ. եղբոր՝ Ջուանշիրի հետ միասին հարձակվում է արաբների վրա և գերությունից ազատում հորը՝	I **Ջուանշիր Ա** **(642-683)** Վարազ Գրիգորի երկրորդ որդին՝ «Գարդմանայ տէր և Աղուանից իշխան[15] Սպարապետ Աղվանից աշխարհի: «Կատարի գեղեցկայարմար շինումն տաճարի Աստուծոյ ի բերդին Գարդմանայ»[16] : Կինը՝ Խոսրովանուշ	I Յեզուր Խոսրով	I **Վարազման** **I** Վախրանգ ի Վարազմանեան Մասնակցում է 699 թ. Պարտավում հրավիրված եկեղեցական ժողովին, որտեղ քննարկվում էր քաղկեդոնականության մերժման հարցը:

[10] Նույն տեղում, էջ 172:
[11] Նույն տեղում, էջ 339:
[12] Նույն տեղում, էջ 172:

Վարազ **Գրի-գորին**	«զդուստր իշխանին Սիսականեան աշխարհին»[17]: Քաղաքական նկատառումներով ամուսնացած էր խազարաց խաքանի դստեր հետ: Դավադրաբար սպանվում է 683 թ.: Ուներ որդիներ և դուստրեր, որոնց անունները չեն հիշատակվում: Անհայտ են մնացել նաև նրանց հետագա ճակատագրերը: I **Վարազ Տրդատ Ա** I		I **Վարազո** I I **Վարդան,** I **Վարդանուհի**
I **Վարդան (705-709)** Հոր՝ Վարազ Տրդատի, արաբներին հնազանդություն հայտնելու պատճառով, եղբոր՝ Գագիկի հետ ձերբակալվում է Հուստինիանոս Բ-ի կողմից և միայն 12 տարի անց ազատվում ու վերադառնում է հայրենիք:	I Ջուանշիրի եղբոր՝ Վարազ Փերոժի որդին (683–699, 705-709) «Պատրիկ Էքսարխոս»[18] բարելավում է երկրի ներքին ու արտաքին դրությունը, բարեկամություն հաստատում Հայոց մյուս իշխանների և Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս Բ-ի (685-695, 705-711) հետ: Վերջինիս տապալվելուց հետո՝ 699 թ., որդիների՝ Վարդանի ու Գագիկի, հետ գերության է տարվում Կոստանդնուպոլիս, որտեղ մնում է մինչև 705 թ.:		I **Գագիկ** Կիսում է եղբոր ճակատագիրը՝ նույն պատճառով ձերբակալվելով և 12 տարի անցկացնելով բանտում:

[13] Իշխանական տիտղոս:
[14] **Կաղանկատվացի**, էջ 213:
[15] Նույն տեղում, էջ 182:
[16] Նույն տեղում, էջ 187:
[17] Նույն տեղում, էջ 179:
[18] **Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան** *պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 101:*

	Վերադառնալով գերությունից՝ վերստին զբաղեցնում է գահը, և միաժամանակ հարկ վճարելով Բյուզանդական կայսրությանը, Խազարական խաքանատին ու Արաբական խալիֆայությանը՝ պահպանում է երկրամասի ներքին ինքնավարությունը: *Զոհվում է 709 թ. խազարական արշավանքներից մեկի ժամանակ:* I ***Սպրամ տիկին*** *Վարազ Տրդատի կինը: Ամուսնու գերությունից հետո սկզբնական շրջանում վարում է իշխանությունը, բայց հետո ստիպված տեղը զիջում այլ տոհմից Շերո անունով իշխանին (699-704), որին 704 թ. արաբներն իրենք են հեռացնում գահից և գերության տանում Սիրիա:* I **(709-711 թթ.)** *Խազարների տիրապետության շրջան* I ***Զուանշիր Բ*** **(711-725 թթ.)** *Սպանվում է 725 թ.:* ***I*** ***Վարդան*** *Վարազ Տրդատ Ա-ի գերությունից վերադարձած որդին* I ***Ներսեհ Դժնդակ***	I ***Մարիամ***	

	Մականունը՝ Դժնդակ, ստացել է դժնի վարքի համար: I ***Գագիկ*** I		
	I ***Ստեփանոս*** I ***Վարազման*** I ***Վարազ Տրդատ Բ*** I	I *Սպրամիկ*	
I *Ստեփանոս «Կիսօրեայ վախ-ճանեալ»*[19]*:*	*I* ***Զուանշերիկ*** *«Մնաց ժառանգ»*[20]*:* I ***Վարազ Տրդատ Գ*** *Որդու՝ Ստեփանոսի հետ 821 թ. սպանվում է Դաղոյի վանքի ձորում, որ կոչվում է Խորաձոր, իր ազգական Ներսեհ Փիլիպպա– նի կողմից:*	I *Վարազման «Ընկղմեցավ ի Կուր գետ»*[21]*:*	
I ***Ստեփանոս*** *Սպանվում է հոր հետ միասին, նույն տարում ու նույն տեղում:*		I ***Սպրամ*** *Վարազ Տրդատ Գ-ի դուստրը: Հոր և եղբոր եղերական սպանությունից հետո մայրը փախցնում տանում է Խաչեն, որտեղ և ամուսնացնում է Առանշահիկ իշխան Սահլ Սմբատյանի որդու՝ Ատրներսեհի հետ, որով և կրկին միավորում է այս երկու տոհմերը: Այսուհետև նրանք համատեղությամբ իշխում են Ուտիք-Արցախյան աշխարհում*[22]*:*	

Այս դիպվածներով վերանում է Միհրանյան հարստության շուրջ երկուհարյուրամյա մենիշխանությունը Հայոց Արևելից կողմերում: Դրա հետ մեկտեղ դադարում է Այս

[19] ***Կաղանկատվացի***, *էջ 325:*
[20] *Նույն տեղում:*
[21] *Նույն տեղում:*
[22] *Այժմյան Լ.Ղ.Հ-ի Ստեփանակերտի շրջան:*

դիպվածներով վերանում է Միհրանյան հարստության շուրջ երկուհարյուրամյա մենիշխանությունը Հայոց Արևելից կողմերում: Դրա հետ մեկտեղ դադարում է գոյություն ունենալ նաև տեղի միասնական իշխանությունը: Այն մասնատվում է երկրամասի առանձին վայրերում բարձրացած ավատատիրական խոշոր

КНЯЖЕСКИЙ РОД МИhРАНИДОВ В УТИК-АРЦАХЕ

СВАЗЯН Г.С.

Резюме

В 590 г. в Утикской области Гардман обосновался княжеский род Миhранидов. Будучи персами, они приняли христианство, вступив в родственные связи с местными армянскими нахарарскими домами. Затем, овладев территорией, расположенной между реками Кура и Аракс, они правили Утик-Арцахским княжеством более двухсот лет (590-821 гг.), “передавая власть от отца к сыну”.

Родоначальником династии являлся Миhр-Миhран, правопреемниками которого были Армаэл, Вард I, Вардан Храбрый, Вард II, Вараз Григор (628-642), Джуаншир I (642-683), Вараз Трдат I (683-699, 705-709), Джуаншир II (711-725), Вардан, Нерсеh, Гагик, Степанос, Варазман, Вараз Трдат II, Джуаншерик, Вараз Трдат III. С убийством Вараз Трдата III в 821 г. династия прекратила свое существование.

THE DYNASTY OF THE MIHRANIDES IN UTIQ-ARTSAKH

H. SWASYAN

Abstract

In 590, the dynasty of Mihranides settled down in Gardman in Utiq. Though they were Persians, they adopted Christianity by establishing ties with local princely houses. Having occupied the territory located between Kur and Araks, they assumed power over Utiq-Artsakh dynasty for over two centuries (590-821) “transferring power from father to son”.

Myhr-Mihran is considered to be the dynasty founder succeeded by Armayel, Vard I, Vardan the Brave, Vard II, Varaz Grigor (628-642), Javanshir I , Varaz Trdat III. The dynasty fell in 821.